ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐՈՎ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐԻ ՀԵՏ



ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սույն թվականի փետրվարի 28-ին Արարատյան թեմի քահանայից դասը՝ գլխավորությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի, ինչպես նաև Մայր Աթոռի քահանա հայրերը առաջնորդվում են Վեհարան՝ շնորհավորելու Վեհափառ Հայրապետին Ղևոնդյանց տոնի առթիվ և ստանալու նրա հայրական օրհնություններն ու բարի մաղթանքները:

Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը իր խոսքն ուղղելով Հայոց Հայրապետին՝ ասում է. «Բացառիկ ուրախություն է ինձ համար, որպես առաջնորդական փոխանորդ Արարատյան հայրապետական թեմի, Ղևոնդյանց սուրբ տոնի առթիվ քահանայից դասն առաջնորդել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին առ Ձերդ Սրբություն: Այս հանդիպման նպատակն է Ձեր պատգամներով առավել իմաստավորել Ղևոնդյանց քահանայից խորհուրդը մեր՝ հոգևորականներիս կյանքում:

Դարերի հեռավորությունից, այսօր, մեր մերձեցումը Ղևոնդյանց խորհրդին մեզ գոտեպնդում և մղում է նոր հանձնառությունների ու վոհողությունների, որոնք մեր ներկա կյանքի խաղաղ պայմաններում անշուշտ տարբերվում են թե՛ իրենց բնույթով և թե՛ բովանդակությամբ: Ես վստահ եմ, մեր այս այցելությունը Մայրավանք Ս. Էջմիածին, թեմիս քահանայից կողմից պիտի ընկալվի որպես հավատարմության և անձնվեր ծառայության ուխտի նորոգում Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հանդեպ:

Վեհափառ Տեր, այս ուրախալի պահին ցանկանում եմ փոքր-ինչ վաղաժամ շնորհավորել Ձեզ Վարդանանց տոնի, ինչպես նաև Ձերդ Սրբության անվանակոչության առթիվ: Մեր մաղթանքն է և սրտաբուխ աղոթքը, որ ամենակարող Տերը պարգևի Ձեզ արևշատ կենաց օրեր, որպեսզի համայր ամս առաջնորդեք մեզ անշեղորեն դեպի բարին և դեպի խաղաղություն»:

Այնուհետև քահանայից դասի անունից խոսք է ասում Երևանի Ս. Սարգիս եկեղեցուց Տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյանը: Տեր հայրը իր խոսքի սկզբին նշում է, որ «Հազար հինգ հարյուր տարիներից ավելի է անցել այն հիշարժան օրերից, երբ մի բուռ հայ հոգևորականներ, բարձր գիտակցությամբ, անվարան գնացին դեպի նահատակություն հանուն հայրենիքի և Ս. Եկեղեցու փրկության: Ղևոնդյանք Վարդանանց ոգին էին, նրանք արդարության սուրը դրեցին Վարդանանց ձեռքին՝ աներեր այն շարժելու թշնամու դեմ»: Շարունակելով իր խոսքը Վարդանանց և Ղևոնդյանց անմահ ոգու մասին՝ Տեր Ռուբենը այն միտքն է հայտնում, որ այդ ոգին Ե դարից սկսած հայ ժողովրդի համար դժվարին և ճգնաժամային պահերին որպես փարոս լուսավորում էր հայ հոգիները և ջերմ հայրենասիրական զգացումներով հանուն իրենց արդար դատի նրանց մղում ընդդեմ ոխերիմ թշնամու: Վերջում տեր հայրը իր խոսքն ուղղելով Վեհափառ Հայրապետին՝ ասում է. «Նվիրական այս օրերին Հայաստան աշխարհի տարբեր մասերից եկել ենք այստեղ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, մի անգամ ևս նորոգելու մեր սրբական ուխտը, ստանալու Ձեր հայրական օրհնությունները և բարի մաղթանքները: Վեհափառ Տեր, Ձեր օրհնյալ Աջը դրեք նրանց գլուխներին»:

Տեր հոր խոսքից հետո իր օրհնությունն է տալիս Հայոց Հայրապետը: Նա հայրական ջերմ խոսքերով իր հերթին շնորհավորում է ներկաներին Ղևոնդյանց տոնի առթիվ, մաղթում նրանց նորանոր հաջողություններ իրենց հոգևոր առաքելության և հայրենանվեր գործունեության մեջ:

Վերջում, ի հիշատակ այս գեղեցիկ հանդիպման, Վեհափառ Հայրապետը քահանայից դասի հետ նկարվում է Վեհարանի շքամուտքի առջև: